ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXVI, № 3, 1973

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԱՐՇԱՎԻՐ ԱԲԳԱՐԻ ԲԱԲԱՅԱՆ

1973 թվականի փետրվարին լրացավ ականավոր ֆիտոպաթոլոգ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԱՐՇԱՎԻՐ ԱԲԳԱՐԻ ԲԱԲԱՅԱՆԻ ծննդյան 70 և գիտական գործունեության 45 ամյակը։



Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետն ավարտելուց հետո Ա. Ա. Բաբայանը, որպես լավագույն շրջանավարտ, 1925 թ. գործուղվում է Լենինգրադ կենդանաբանության և ֆիտոպաթոլոգիայի բարձրագույն դասընթացներ՝ ֆիտոպաթոլոգիայի գծով մասնագիտանալու։ Լենինգրադում Ա. Ա. Բաբայանը աշխատանքի է անցնում անվանի ֆիտոպաթոլոգ Ա. Ա. Յաշնևսկու լաբորատորիան և ընդգրկվում է Միջին Ասիայի բամբակենու հիվանդությունների ուսումնասիրմանը նվիրված համամիութենական առաջին գիտարշավի աշխատանքում։ Այստեղ նա հայտնաբերում է Ուզբեկստանում և Թուրքմենիայում բամբակենու վրա մինչ այդ չարձանագրված երկնագույն ֆուզարիոզ, արմատային փտում, ինչպես նաև խաղողի միլդիու հիվանդությունները։

1929 թ. ապրիլին, Անդրբամբակկոմի հրավերով Ա. Ա. Բաբայանն տեղափոխվում է Հայաստան և աշխատանքի անցնում նոր կազմակերպված Հայկական նախիջևանյան բամբակենու գիտահետազոտական կայանում որպես ֆիտոպաթոլոգ, իսկ քիչ անց դառնում է նրա դիրեկտորը։

1931—1933 թվականներին Ա. Ա. Բաբայանը միաժամանակ ղեկավարում է բամբակենու Անդրկովկասյան գիտահետազոտական ինստիտուտի ֆիտոպաթոլոգիական աշխատանքները (Կիրովաբադ)։ Այդ ընթացքում նրան հաջողվում է լայն հետազոտական աշխատանքներ ծավալել բամբակենու վիլտ ու դամոզ հիվանդությունների գծով, որով և հիմք է դնում Հայաստանում ֆիտոպաթոլոգիական ու միկոլոգիական գիտությունների զարգացմանը։

Ա. Ա. Բաբայանը որպես բամբակենու հիվանդությունների լավագույն գիտակ ընդգրկվում է այդ կուլտուրայի հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների սիստեմի մշակման համամիութենական հանձնաժողովի աշխա-

տանքներում։

Խորագիտակությունն ու արտակարգ աշխատասիրությունը Ա. Ա. Բաբայանին հնարավորություն են ընձեռել նշված հարցերին զուգընթաց, գիտական գործունեության դեռ վաղ շրջանում զբաղվելու նաև գյուղատնտեսական բազմաթիվ այլ կուլտուրաների հիվանդությունների ուսումնասիրությամբ։

Դ. Ն. Բաբայանի համահեղինակությամբ 1930 թվին լույս է տեսնում նրա «Նյութեր Հայաստանի միկրոֆլորայի վերաբերյալ» աշխատությունը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Երևանի Մատենադարանում պահվող հինավուրց ձեռագրերը ենթարկվեցին բորբոսասնկերի կողմից փչացման վտանգին։ Ա. Ա. Բաբայանը եռանդով ձեռնամուխ եղավ Մատենադարանին կից միկոլոգիական լաբորատորիայի կազմակերպման և նշած ձեռագրերի վարակազերծման ու վերականգնման աշխատանքների ղեկավարմանը։

1930—1957 թթ. Ա. Ա. Բաբայանը ղեկավարում է բամբակենու գոնալ կայանի, տեխնիկական կուլտուրաների ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժինը, որտեղ բացի ֆիտոպաթոլոգիական հետազոտություններից աշխատանքներ էին տարվում նաև միջատաբանության գծով։

Բույսերի պաշտպանության Հայկական գիտահետազոտական ինստիտուտի կազմակերպման օրվանից (1964) պրոֆեսոր Ա. Ա. Բաբայանը ղեկավարում է այդ ինստիտուտի ֆիտոպաթոլոգիայի բաժինը, ուր հետազոտվում են գյուղատնտեսական կուլտուրաների սնկային, բակտերիալ և վիրուսային բազմաթիվ հիվանդություններ։ Նրա ղեկավարությամբ գիտական և գործնական կարևոր աշխատանքներ են տարվել, նվիրված ծխախոտի կեղծ և իսկական ալրացողների, գազաթնային բլորոզ հիվանդությունների, դդմազգիների իսկական ալրացողի դեմ արդյունավետ ֆունգիցիդների բացահայտման և արտադրության մեջ լայնորեն ներդնելու, կարտոֆիլի ֆիտոֆտորայի փտումների դեմ պայքարի միջոցառումների կատարելագործման, թիթեռնածաղկավոր բույսերի հիվանդությունների տեսակային կազմի, տարածվածության ու դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումների մշակմանը և այլ հարցերի։

Ներկայումս նրա ղեկավարությամբ ուսումնասիրվում են տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հացազգիների ժանգերի ռասայական կազմի պարզաբանումը Հայաստանում, աշնանացան և գարնանացան ցորենների համաշխարհային հավաքածուի ֆիտոպաթոլոգիական գնահատումը, լոլիկի, խորդենու, կարտոֆիլի, դդմազգիների թառամումն ու վիրուսային հիվանդությունները։

Ա. Բաբայանի աշխատանքներում միշտ պատշաճ տեղ են գրավել կուլտուրական բույսերի իմունոլոգիայի և հիվանդությունների մասսայաբար հանդես գալու նախիմացման հարցերը։ Նրա ղեկավարությամբ մշակվել է խաղողի վագի միլդի ու հիվանդության հանդես գալու նախիմացի նոր մեթոդը, որը հիմք կծառայի այդ վտանգավոր հիվանդության դեմ պայքարի միջոցառումների կատարելագործմանը։

Նրա ղեկավարած բաժնում մշակած նյութերի հիման վրա 16 գիտական աշխատակիցներ և ասպիրանտներ ատացել են գիտության թեկնածուի աստիճան։

Ա. Ա. Բաբայանը դասավանդել է Երևանի պետական համալսարանում, գյուղատնտեսական ինստիտուտում, կոմունիստական գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում, տեխնիկումներում և այլն։

նա ծխախոտի կեղծ այրացողի դեմ պայքարի միջոցառումների համամիութենական հրահանգի հեղինակներից մեկն է։

Բամբակենու գոմոզին նվիրված նրա մենագրությունը, որը լույս ընծայվեց 1963 թվականին, հեղինակի 30-ամյա գիտական պրպտումների արդյունք է։ Այն բամբակենու գոմոզի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտությունների ու անձնական ուսումնասիրությունների առավել լրիվ և հաջող սինթեզն է։

Ա. Բաբայանը համահեղինակ և խմբագիրներից մեկն է հայերեն հրատարակված «Բույսերի պաշտպանության տեղեկագիրք», «Բույսերի պաշտպանության ձեռնարկ» ծավալուն գրքերի։ Նրա գրչին են պատկանում գիտական և գիտա-հանրամատչելի 100-ից ավելի հոդվածներ ու աշխատություններ։

Վաստակաշատ գիտնականը ՍՍՀՄ Վ. Ի. Լենինի անվան գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի բույսերի պաշտպանության բաժանմունքի, ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության միացյալ գիտական խորհրդի, Միութենական «Միկոլոգիա և ֆիտոպաթոլոգիա» ամսագրի խմբագրական կոլեգիայի, բույսերի պաշտպանության գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման Անդրկովկասյան խորհրդի, Սորտափորձարկման ՀՍՍՀ պետական հանձնաժողովի, ՀՍՍՀ ԳԱ կենսաբանական բաժանմունքի միացյալ, Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի գիտական աստիճան շնորհող խորհուրդների անդամ է։

Երկարամյա բեղմնավոր և անբասիր աշխատանքի համար Ա. Ա. Բաբայանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Հայրենական պատերազմի տարիներին անբասիր աշխատանքի համար» մեդալով և «Գյուղատնտեսության առաջավոր» նշանով։

Ցանկանք բազմավաստակ գիտնականին երկար տարիների բաջառողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ գիտության այն բնագավառում, որին նվիրվել է առանց մնացորդի։